




Տ. ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

(Մահվան 35-րդ տարեկիցի առթիվ)

Այս տարի լուսավ բուրդարահայ թեմի անդրանիկ առաջնորդ տ. Ստեփաննոս արք. Հովակիմյանի մահվան 35-րդ տարեկիցը: Նրա անթառամ հիշատակը ոգեկոչելու նպատակով, ի ներկայության Սոփիայի բազմաթիվ հայ հավատացյալների, եկեղեցական վարչության նախաձեռնությամբ Սոփիայի ա. Աստվածածին եկեղեցում կատարվեց հոգեհանգստյան արարողություն, և հանին կենաց քարոզությամբ ոգեկոչվեց նրա բարի հիշատակը:

Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը պատկանում էր մեր ավանդապահ հոգևորական սերնդին: Նա յուրահատուկ նկարագրով տիպար հայ եկեղեցականներից մեկն է եղել, որի կենսագրական գծերն ու երկարամյա կյանքի գեղեցիկ դրվագներն ու վաստակավոր գործունեությունը մասնահատուկ տեղ են գրավում մեր եկեղեցական ժամանակակից պատմության մեջ:

Ստեփաննոս արքեպիսկոպոսը ծնվել է 1846 թ. հունիսի 12-ին Նիկոմիդիայի Տաղ գյուղում: Հայ եկեղեցուն և հավատացյալ հայ ժողովրդին ծառայելու բարի տենչանքն ունենալով, իր ամբողջ կյանքը նվիրում է եկե-

ղեցուն: 1873 թ. Անառակի կիրակիի օրը Նիկոմիդիայի ա. Աստվածածին եկեղեցում ձեռնադրվում է կուսակրոն քահանա՝ ձեռամբ Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանի:

Հոգեւոյս Ստեփաննոս արքեպիսկոպոսը, ինչպես ինքն է նկարագրում իր ինքնակենսագրության մեջ, «գրաբար» կյանք չէ ունեցել: Նա մի քանի տարի սովորել է Կ. Պոլսի Խազյուղի Ծախնազարյան գիշերօթիկ դպրոցում: Հոգևոր կոչումն ստացած երիտասարդ եկեղեցականի առջև բացվում է ծառայության լայն առաքելագ: Այն ժամանակվա Նիկոմիդիայի նորընտիր առաջնորդ՝ Ներսես եպիսկոպոս Վարժապետյանը, Կ. Պոլսի հայոց պատրիարքական թափուր Աթոռի համար նկատվում էր լավագույն թեկնածուն: Սակայն, պատրիարքական Աթոռին բարձրացողը պետք էր անպայման եպիսկոպոսական օծում ստացած լիներ ա. Էջմիածնում, բայց քանի որ Ներսես արքեպիսկոպոսացած էր Սսի Աթոռում, հետևաբար ուխտի է գնում Մայր Աթոռ՝ Իջման ա. սեղանի առջև իր ուխտը վերանորոգելու և հավատարիմ մնալու ա. Էջմիած-

մին և Ամենայն Հայոց Հայրապետության ու վերադառնում է Կ. Պոլիս:

Ներսես Վարժապետյանը պատրիարք ընտրվելով, Նիկոմիդիայի թեմի առաջնորդությունը ստանձնում է երիտասարդ Ստեփաննոս վարդապետը՝ փոխանորդությամբ, ապա ստանձնում է առաջնորդության ծանր պաշտոնը, երեսփոխանական ժողովի ընտրությամբ: Ստեփաննոս սրբազանը իր եպիսկոպոսական օծումը ստացել է ս. Էջմիածնում, երջանկահիշատակ Տ. Տ. Մակար կաթողիկոսից, իսկ արքայության տիտղոսը՝ Խրիմյան Հայրիկից:

Ծուրջ 70 հազար հայության հոգևոր առաջնորդությունը ստանձնելով, Ստեփաննոս եպիսկոպոս Հովակիմյանը ցուցաբերում է մեծ ձեռններեցություն ու փայլուն գործունեություն: Նրա առաջնորդության շրջանում Նիկոմիդիայի հայ եկեղեցիներն ու դպրոցները ապրում են զարթոնքի շրջան, հոգևոր կրթական իմաստով:

Ստեփաննոս սրբազանը իր եկեղեցաշեն ու ազգօգուտ գործունեությամբ, իր համակցանքի ընթացքում արժանանում է իր ժողովրդի մեծ համակրանքին ու գուրգուրանքին: Նա կառուցել է տվել բազմաթիվ եկեղեցիներ, դպրոցներ, կամուրջներ, ճանապարհներ, ջրաղացներ, հաստաբեր շենքեր: Նա եղել է ազնիվ սրտի և մեծ հոգու տեր եկեղեցական: Բնավորությամբ շատ բարի, հեզ ու համեստ այս անձնավորությունը հանդիսացել է հավատքի, ազնվության, աշխատասիրության լավագույն օրինակը իր ժողովրդի համար:

1915 թ. հուլիսին, հայ ժողովրդի Մեծ եղեռնի օրերին, Նիկոմիդիայի թեմի ամբողջ հայությունը ևս իր սրբակյաց առաջնորդով ենթարկվեց աքսորի, բարձրացավ հայ Գողգոթան և ցմրուր քամեց աքսորի ամենալեղի բաժակը: Սակայն, Ստեփաննոս սրբազանը իբրև ճշմարիտ հավատացյալ երբեք չընկճվեց, նույնիսկ աքսորի ընթացքում հետևելով իր պատվական ժողովրդին, ինք ևս ապրեց նրա մեծ տառապանքը և ամոքեց նրա ցավերն ու վշտերը:

Գոնիալում, ուր առաջին հանգրվանն էր ընդհանուր աքսորի, նա մերժում է կառավարչի հրամանը, այն է՝ թողնել աքսորված ժողովուրդը ու գնալ միայնակ ապաստանել Երուսաղեմի հայոց վանքում: Այս հրամանը Ստեփաննոս սրբազանը մերժում է ասելով. «Ժողովուրդն ուր, ես ալ՝ հո՛ն»:

Զինադադարից հետո Հովակիմյան սրբազանը վերադառնում է իր թեմը և իր կոտորակված հոտի մնացորդին գլուխն անցնելով, կրկին շարունակում է իր հոգևոր հովվությունը, այդ խեղճ, անկյալ ու կոտորյալ

խլայների հազար ու մեկ վշտերն ու ցավերը ամոքելով:

1922 թ. Նիկոմիդիայի երբեմնի բարգավաճ թեմում այլևս փակվել էին եկեղեցի և դպրոց ու ժողովուրդը գաղթականի ցուպն առնում էր իր ձեռքը: Ստեփաննոս արքեպիսկոպոսը նույնպես գալիս է Բուլղարիա, ուր վայելում է իր հարազատ ժողովրդի մեկ մասի ջերմ հյուրասիրությունը, որ դժխեմ բախտի մեկ հարվածով եկել ու հաստատվել էր Բուլղարիայի ասպնջական այս ամիսներում:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմը բուլղարահայ թեմը չի ունեցել ո՛չ թեմական կազմակերպություն և ո՛չ էլ առաջնորդ: Բուլղարահայ համայնքները եղել են Թուրքիայի հայոց պատրիարքության հոգևոր իշխանության տակ: Պարբերաբար այստեղ են այցելել Պոլսո պատրիարքության կողմից վարդապետներ ու եպիսկոպոսներ՝ Բանին կենաց քարոզությամբ մղխիթարելու հավատացյալներին: Երբեմն այցելու հոգևորականները փորձել են եկեղեցիները կազմակերպել ու առաջնորդական Աթոռ հաստատել, ինչպես օրինակ՝ Վահան ծ. վրդ. Հակոբյանը, Մատաթիա վրդ. Տերունյանը, որոնք, սակայն, չեն հաջողել:

1924 թ. ստեղծվում է բուլղարահայ թեմական կազմակերպություն՝ Մայր Աթոռի հոգևոր վերին իշխանության ներքո, ու անդրանիկ առաջնորդ է ընտրվում միաձայնությամբ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը՝ հակառակ իր առաջացած տարիքին: Նա իր վարչական, եկեղեցական ու ազգօգուտ լայն գործունեությամբ ամուր հիմքերի վրա է դնում նորակազմ բուլղարահայ թեմը: Ստեփաննոս սրբազանը ձեռներեցությամբ և ոգևորությամբ շարունակում է իր գործունեությունը բուլղարահայ ավանդապահ ժողովրդի ծոցում, մինչև որ կնքում է իր մահկանացուն:

1930 թ. Սոֆիայում մի խումբ ազգայիններ որոշում են տոնել Ստեփաննոս սրբազանի քահանայական գործունեության 60-ամյակը: Այս մտահղացումը հայտնում են առաջնորդ սրբազանին, որը համաձայնվում է մեկ պայմանով՝ գոյանալիք հասությո՞ր հատկացնել Սոֆիայում կառուցվելիք ազգային վարժարանին: Ամբողջ մեկ տարի հայտարարվում է հոբելյանական տարի: Աշխարհի մի շարք հայկական գաղթօջախներում, Պոլսում, Կահիրեում, Ալեքսանդրիայում, Մարսելում, Լիոնում և այլուր, ինչպես նաև Բուլղարիայի բոլոր հայ համայնքներում, շուքով ու հանդիսություններով է տոնվում բազմերախտ առաջնորդի քահանայական ձեռնարկության հոբելյանը:

Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանի կյանքի թելը կտրվում է 1934 թ., 88 տարեկան հասակում: Այդ համեստ հոգեվորականի անունը մինչև այսօր էլ մեծ երախտագիտությամբ է հիշվում բուլղարահայ գաղթօջախում՝ բազմաթիվ հայորդիների սրտերում:

Նրա անունները ամփոփված են Սոփիայի հայոց գերեզմանատան մատրան մեջ:
Հարգանք նրա պայծառ հիշատակին:

Տ. ՄԵՍՐՈՊ ՔԶՆ. ԲԵՆԼԻՅԱՆ
(Հոգևոր հովիվ Սոփիայի հայոց)

Սոփիա

